ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/87 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների («Աբովյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.12.2024թ. ժամը 16:00-ին Էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Մկրտչյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Ամալյա Դավթյան /գնահատող/
	Ցոլակ Հակոբյան /գնահատող/
	Հարություն Մարտիրոսյան /բացող/
	Արամ Խաչատրյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արսեն Մելքոնյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/87 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-24/87 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Էլ. Հասցեները
1	«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	tender@ondesing.am

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները	
		«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ	
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	2372000	18800000	18800000

5. Տվյալներ մասնակիցների հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի սահմանված ժամկետում, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.12.2024թ.

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված.

6.1.1 հայտում բացակայում են՝

6.1.1.1 Մասնագետների որակավորումը հավաստող հավաստագրերի պատճեները,

6.1.1.2 Պայմանագրի (պայմանագրերի) մասին քաղաքաշինական փորձաքննության դրական եզրակացությունը,

6.1.1.3 Մասնակցի կողմից ներկայացված հավաստումն այն մասին, որ ներկայացված մասնագետները վերջին 5 տարվա ընթացքում նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատուցել են նշված որակավորմանը համապատասխան ծառայություն,

6.1.1.4 Մասնակցի կողմից հավաստում, որ իր կողմից ներկայացրած նմանատիպ պայմանագիրը (պայմանագրերը) ներառում է (են) ինժեներական ենթակառուցվածքների, կապի, տեսահսկման և հրդեհային անվտանգության համակարգերի նախագծում:

6.1.2 փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

6.1.2.1 Մասնակցի առաջարկված գինը գերազանցում է գնման (նախահաշվային) գինը,

6.1.2.2 Հավելված 1.1-ում հիմնական աշխատակազմում ներառված երեք մասնագետների աշխատանքային փորձի ժամանակահատվածը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Տվյալներ ընտրված, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 6.1.2.1 կետը մերժել **«ՕՆ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-ի** հայտը՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնահատման արդյունքների մասին.

8.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը ընթացակարգ հայտարարել չկայացած, հայտերից ոչ մեկը հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8.2 Հրապարակել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Ամալյա Դավթյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Արամ Խաչատրյան

---------- Արսեն Մելքոնյան /քարտուղար/